ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

ք. Հրազդան «21» Հունվար 2022թ.

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետև՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետև՝ Ինստիտուտ) և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի (այսուհետև՝ Մարզպետարան) միջև:

Հաշվի առնելով Ինստիտուտի և Մարզպետարանի փոխադարձ համագործակցության միջոցով «պետություն-կրթություն-տնտեսություն-զարգացում» քառամիասնության ապահովման ձգտումը.

Կարևորելով պրակտիկ հետազոտությունների իրականացումը և արդյունքների ներդրումը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության.

Բարձր գնահատելով Ինստիտուտի և Մարզպետարանի պատրաստակամությունը՝ Ինստիտուտի ուսանողների պրակտիկայի կազմակերպման, գիտական և մարզական միջոցառումների համատեղ կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով փոխադարձ պայմանավորվածությունները.

Որոշեցին կնքել սույն Հուշագիրը հետևյալի մասին՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Ինստիտուտը և Մարզպետարանը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց լիազորությունների հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով սահմանված համագործակցության շրջանակներում Մարզպետարանը Ինստիտուտին ներկայացնում է մարզում տեղակայված հանրակրթական դպրոցներում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման և մարզադպրոցներում մարզումների

կազմակերպման, ֆիզիկական կուլտուրայի կիրառման արդյունավետության բարձրացման, հանրային առողջության քարոզչության ոլորտներում ՀՀ Կոտայքի մարզում առկա խնդիրները, որոնց ուսումնասիրման և այդ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա Ինստիտուտն իր մասնագիտական ամբիոններում ձևավորում է մագիստրոսական թեզերի, ատենախոսությունների և այլ գիտագործնական աշխատանքների թեմաներ:

2.2 Ինստիտուտն իր պատրաստակամությունն է հայտնում իր ուսանողներին առաջարկել պրակտիկ թեմաներ՝ Ինստիտուտի մասնագիտական ամբիոններում և ՀՀ Կոտայքի մարզում հետազոտություններ իրականացնելու համար, իսկ Մարզպետարանը պատրաստակամություն է հայտնում իր իրավասությունների շրջանակներում աջակցություն ցուցաբերել այդ հետազոտություններն իրականացնողներին:

2.3 Սույն հուշագրով Ինստիտուտը և Մարզպետարանը համագործակցում են նաև.

2.3.1 ներդրումային, նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ

2.3.2 գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման ոլորտներում

2.3.3 սույն Հուշագրի գործողությամբ սահմանվող՝

- Ինստիտուտի և Մարզպետարանի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության տարածքների, գույքի օգտագործման
- երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման
- համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու

3. Համագործակցության սկզբունքները

Ինստիտուտը և Մարզպետարանը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Ինստիտուտի և Մարզպետարանի համար:

4.4 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

4.5 Սույն Հուշագիրը դադարեցվում է կողմերից մեկի նախաձեռնությամբ :

5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Մարզպետարան**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս Վարչական շենք
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան	Մարզպետ՝ Ահարոն Սահակյան
----------	----------
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.